



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ**

N 533 - Ա

13 հոկտեմբերի 2021 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 17-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 29-ի N 1603-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի պահանջը

որոշում եմ՝


1. Սևանա լճում ձկան որսի արգելման ժամանակահատվածում ձեռնարկվող միջոցառումները կազմակերպելու, կատարված աշխատանքների արդյունքները քննարկելու և գնահատելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

- | | |
|-------------------|---|
| Նավոյան Ռուբիկ | - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ |
| Երվանդյան Արա | - Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության Գեղարքունիքի մարզային վարչության Գավառի բաժնի պետի ՊԺԿ /համաձայնությամբ/ |
| Կարապետյան Ալիկ | - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դատախազության ավագ դատախազ /համաձայնությամբ/ |
| Կիրակոսյան Վազգեն | - Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետի ծառայության գծով տեղակալ /համաձայնությամբ/ |
| Մանուկյան Ակսել | - Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչության պետի տեղակալ /համաձայնությամբ/ |

Պետրոսյան Մարտին - Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի
գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Արեւյան Արման - «Սևան» ազգային պարկ ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար /համաձայնությամբ/

2. Հանձնաժողովին՝ մինչև Սևանա լճում ձկան որսի արգելման ժամանակահատվածի
ավարտը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին պարբերաբար
տեղեկատվություն ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ:

13.10.2021



ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
ք. Գավառ